

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պաշտոնի (գրադմունքի) անվանումը	Էլեկտրական կայանների, ցանցերի, համակարգերի, արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների շահագործման, վերահսկման, նորոգման, փորձարկման և չափագիտական աշխատանքների տեխնիկ
I. Դերը	Իրականացնում է էլեկտրական ցանցերի, համալիրների, արդյունաբերական տարբեր և գյուղատնտեսական ձեռնարկությունների, էլեկտրական կայանների ներքին էլեկտրացանցի մալուխային գծերի, լուսարձակիչների, ենթակայանի էլեկտրասարքավորումների տեղակայում, շահագործում, սպասարկում և վերանորոգում, մեթոդների կիրառում, ինչպես նաև էլեկտրասարքավորումների հսկում՝ ըստ նորմատիվային պահանջների
II. Խնդիրների բնագավառները	<ol style="list-style-type: none"> 1. առաջադրված խնդրի ձևակերպում և կոնկրետացում 2. աշխատանքային գծագրերի և էլեկտրական սխեմաների պատրաստում 3. անհրաժեշտ նյութական ծախսերի և աշխատանքային ծավալների հաշվարկում 4. էլեկտրական սարքավորումների տեղակայում 5. էլեկտրական սարքավորումների հավաքում, ընթացիկ և վերջնական փորձարկումներ 6. էլեկտրական սարքավորումների շահագործում, սպասարկում, վերանորոգում և հսկում 7. առաջացած անսարքությունների, խափանումների և աշխատանքային այլ խնդիրների բացահայտում և կարգավորում 8. էլեկտրական սարքավորումներն ու սարքերը շահագործող անձնակազմի հրահանգավորում 9. տեխնիկական փաստաթղթերի ձևակերպում
Խնդիրների բնագավառ 1. Առաջադրված խնդրի ձևակերպում և կոնկրետացում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Էլեկտրատեղակայանքի գննումը • Էլեկտրասարքավորման գննում • սահմանված նորմերին և կանոններին չհամապատասխանող հանգույցի բացահայտում • առաջացած խնդրի վերացման եղանակի որոշում • առաջացած խնդրի վերացման աշխատանքների պլանավորում
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Ճիշտ է կատարում էլեկտրատեղակայանքի գննումը • Ճիշտ է կատարում էլեկտրասարքավորման գննումը • Ճիշտ է բացահայտում սահմանված նորմերին և կանոններին չհամապատասխանող հանգույցը • Ճիշտ է որոշում առաջացած խնդրի վերացման եղանակը • Ճիշտ է պլանավորում առաջացած խնդրի վերացման աշխատանքները
Խնդիրների բնագավառ 2. Աշխատանքային գծագրերի և էլեկտրական սխեմաների պատրաստում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - սահմանում է էլեկտրական սխեմայի տիպը, - կատարում է մոնտաժման սխեմաների գծագրեր - ապահովում է ընդհանուր շղթայի՝ այլ բաղադրիչների հետ համատեղելիությունը,

	<ul style="list-style-type: none"> - կատարում է սխեմայի կատարելագործվող հանգույցների և փորձնական նմուշների ուրվագիծը՝ օգտագործելով դետալների պայմանական նշանները:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • էլեկտրական սխեմայի տիպը ճիշտ է սահմանված, • մոնտաժման սխեմայի գծագիրը կատարված է ընդունված պայմանական նշանակումներով, • մոնտաժման սխեման կատարված է արդյունավետ տարբերակով, • կատարված սխեմայում ապահովված է բոլոր բաղադրիչների համատեղելիությունը՝ մոնտաժման առումով, • մշակված էլեկտրական սխեման բավարարում է ներկայացվող տեխնիկական պահանջներին, • սխեմայի ուրվագիծը կատարված է տեխնիկական պահանջներին համապատասխան, • սխեմայի ուրվագծում օգտագործված են միայն ընդունված պայմանական նշանակումներ, • սխեման ուրվագծված է առավել արդյունավետ տարբերակով:
Խնդիրների բնագավառ 3. Անհրաժեշտ նյութական ծախսերի և աշխատանքային ծավալների հաշվարկում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - նախապատրաստում է տվյալներ՝ նյութական ծախսերի և աշխատանքային ծավալների վերաբերյալ հաշվարկներ կատարելու համար, - կատարում է անհրաժեշտ հաշվարկներ՝ ըստ ծառայողական հրահանգների - կատարում է անհրաժեշտ սարքերի և սնող գծերի ընտրության հաշվարկ՝ ըստ ծառայողական հրահանգների
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> - ճիշտ է նախապատրաստում տվյալներ՝ նյութական ծախսերի և աշխատանքային ծավալների վերաբերյալ հաշվարկներ կատարելու համար, - ճիշտ է կատարում անհրաժեշտ հաշվարկները՝ ըստ ծառայողական հրահանգների - ճիշտ է կատարում անհրաժեշտ սարքերի և սնող գծերի ընտրության հաշվարկը՝ ըստ ծառայողական հրահանգների
Խնդիրների բնագավառ 4. էլեկտրական սարքավորումների տեղակայում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - մոնտաժում է մալուխային և օդային գծերը աշխատանքային գծագրերին համապատասխան, - գնահատում է էլեկտրասարքավորման տեղակայման վայրը, - կազմակերպում է էլեկտրասարքավորման տեղադրման և ամրացման աշխատանքները, - միացնում է էլեկտրասարքավորումը աշխատանքային այլ սարքավորումներին՝ հաշվի առնելով էներգախնայող տեխնոլոգիաները, - միացնում է սնող ցանցին և ստուգում է էլեկտրասարքավորման աշխատանքը ընդհանուր շղթայում՝ ապահովելով նորմատիվային պահանջների կատարումը
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • մալուխային և օդային գծերի մոնտաժը կատարված է պահանջվող նորմերին համապատասխան, • արդյունաբերական և քաղաքացիական շենքերի էլեկտրասարքավորումների տեղակայման վայրը ճիշտ է գնահատված,

	<ul style="list-style-type: none"> • ըստ հանձնարարականի սարքավորումը տեղակայված է պահանջվող նորմերին համապատասխան, • էլեկտրասարքավորումը այլ սարքավորումներին միացված է առավել արդյունավետ տարբերակով, • ընդհանուր շղթայում սնող ցանցերի միացումը կատարված է ըստ նորմատիվային պահանջների և ապահովված է շղթայի անվտանգ աշխատանքը
<p>Խնդիրների բնագավառ 5. էլեկտրական սարքավորումների հավաքում, ընթացիկ և վերջնական փորձարկումներ</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> - էլեկտրասարքավորման փորձարկման աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ պայմանների ապահովում, - էլեկտրասարքավորման փորձարկման ռեժիմների, յուրաքանչյուր ռեժիմում փորձարկման տևողության և ընթացակարգերի որոշում, - էլեկտրասարքավորման փորձարկում - էլեկտրասարքավորման փորձարկման հսկում՝ այլ աշխատողների կողմից դրա իրականացման նկատմամբ , - էլեկտրասարքավորման փորձարկման արդյունքների ամփոփում:
<p>Կատարման չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> • էլեկտրասարքավորման փորձարկման նպատակը ճիշտ է սահմանված, • էլեկտրասարքավորման փորձարկման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ բոլոր պայմաններն ապահովված են, • էլեկտրասարքավորման փորձարկման ռեժիմները սահմանված են փորձարկման նպատակին համապատասխան, • էլեկտրասարքավորման փորձարկման յուրաքանչյուր ռեժիմում փորձարկման տևողությունը, ընթացակարգերը սահմանված են նորմատիվային փաստաթղթերին համապատասխան, • էլեկտրասարքավորման վերաբերյալ ստացվել են փորձարկման գործընթացով պահանջվող տեղեկությունները, • էլեկտրասարքավորման փորձարկման արդյունքները ձևակերպված են սահմանված ընթացակարգին համապատասխան:
<p>Խնդիրների բնագավառ 6. էլեկտրական սարքավորումների շահագործում, սպասարկում, վերանորոգում և հսկում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> - կատարում է սարքավորումների շահագործման ընթացքի հետ կապված ստուգումներ, - հետևում է շահագործման սահմանված ռեժիմների պահպանմանը՝ ըստ տեխնիկական կանոնակարգերի, - հետևում է տեխնիկական սպասարկման միջոցառումների ժամանակին կատարմանը, - հետևում է անվտանգության կանոններով նախատեսված պայմանների պահպանմանը:
<p>Կատարման չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> - ճիշտ է կատարում սարքավորումների շահագործման ընթացքի հետ կապված ստուգումներ, - ճիշտ է հետևում շահագործման սահմանված ռեժիմների պահպանմանը՝ ըստ տեխնիկական կանոնակարգերի, - ճիշտ է հետևում տեխնիկական սպասարկման միջոցառումների ժամանակին կատարմանը, - ճիշտ է հետևում անվտանգության կանոններով նախատեսված պայմանների

	պահպանմանը:
Խնդիրների բնագավառ 7. Առաջացած անսարքությունների և խնդիրների բացահայտում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - բացահայտում է էլեկտրացանցի մալուխային և օդային գծերի, լուսարձակիչների, ենթակայանի էլեկտրասարքավորումների ու կառավարման ապարատների անսարքությունները, - որոշում է անսարքության բնույթը, ծավալը, բարդությունը, պատճառը, - կազմակերպում է անսարքությունների և խնդիրների բացահայտման աշխատանքները, - գնահատում է անսարքության վերացման հնարավորությունը, աշխատանքների կատարման տեղը:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> - ճիշտ է բացահայտում էլեկտրացանցի մալուխային և օդային գծերի, լուսարձակիչների, ենթակայանի էլեկտրասարքավորումների ու կառավարման ապարատների անսարքությունները, - ճիշտ է որոշում է անսարքության բնույթը, ծավալը, բարդությունը, պատճառը, -ճիշտ է կազմակերպում անսարքությունների և խնդիրների բացահայտման աշխատանքները, -ճիշտ է գնահատում անսարքության վերացման հնարավորությունը, աշխատանքների կատարման տեղը:
Խնդիրների բնագավառ 8. Էլեկտրական սարքավորումներն ու սարքերը շահագործող անձնակազմի հրահանգավորում	
Աշխատանքային գործընթացը	- կատարում է էլեկտրական սարքավորումներ շահագործող և սպասարկող անձնակազմի հրահանգավորում՝ ըստ “Տեխնիկական շահագործման անվտանգության կանոններ” տեխնիկական կանոնակարգի պահանջների
Կատարման չափանիշները	• Ճիշտ է կատարում էլեկտրական սարքավորումներ շահագործող և սպասարկող անձնակազմի հրահանգավորում՝ ըստ “Տեխնիկական շահագործման անվտանգության կանոններ” տեխնիկական կանոնակարգի պահանջների
Խնդիրների բնագավառ 9. Տեխնիկական փաստաթղթերի ձևակերպում	
Աշխատանքային գործընթացը	- կազմել սարքավորումների հսկման, հետազոտման, փորձարկման արդյունքների ամփոփման փաստաթղթեր և հանձնման–ընդունման ակտեր օգտվելով ստանդարտներից և նորմատիվային փաստաթղթերից
Կատարման չափանիշները	• պահանջագրերը, հաշվետվությունները, ամփոփագրերը, աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, հանձնման-ընդունման ակտերը, տեխնիկական վերահսկողության փաստաթղթերը լրացված և (կամ) կազմված են գործող նորմատիվային փաստաթղթերին համապատասխան:
Պատասխանատվությունը և բարդության աստիճանը	
Բարդության աստիճանը	<ul style="list-style-type: none"> • Ճիշտ է գնահատում էլեկտրական ցանցի և էլեկտրակայանի ներքին էլեկտրացանցի մալուխային գծերի անսարքության, ենթակայանի էլեկտրասարքավորումների, կառավարման ապարատների մոնտաժման, շահագործման և վերանորոգման աշխատանքների բարդությունները, • Ճիշտ է գնահատում էլեկտրական սարքավորումների բարդությունը, կարևորությունը և արժեքը:

<p>Պատասխանատվությունը</p>	<ul style="list-style-type: none"> • պատասխանատու է իր սպասարկման տարածքում գտնվող էլեկտրական սարքավորումների, ուժային և լուսավորման համակարգերի նորմալ և անխափան աշխատանքի, շահագործման պայմանների պահպանումն ապահովելու, սարքավորումները ճիշտ տեղակայելու, դրանց կարգավորման, նորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքները ժամանակին և ամբողջությամբ կատարելու, իրեն վերապահված գործառույթների վերաբերյալ փաստաթղթերը և ակտերը գործող նորմատիվներին համապատասխան կազմելու համար, ենթականերին և շահագործողներին անհրաժեշտ տեխնիկական օգնություն և խորհրդատվություն տրամադրելու, նյութական միջոցները խնայողաբար օգտագործելու, աշխատանքի անվտանգության կանոնների պահպանումն ապահովելու, համապատասխան տեղեկությունները վերադասին ժամանակին և սահմանված կարգով տրամադրելու, ենթակաների աշխատանքը կազմակերպելու և աշխատանքային կարգապահությունը ապահովելու համար:
<p>Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք</p>	
<p>Լեզուները</p>	<ul style="list-style-type: none"> • Հայերեն՝ գերազանց • Առաջին օտար լեզու՝ B1 • Երկրորդ օտար լեզու՝ B2
<p>Համակարգիչը</p>	<ul style="list-style-type: none"> • MS Word՝ բավարար • MS Excel՝ բավարար • MS PowerPoint՝ բավարար • Internet Explorer՝ բավարար
<p>Գիտելիքը</p>	<ul style="list-style-type: none"> • Գծագրություն • Չափագիտություն • Էլեկտրատեխնիկայի հիմունքներ • Էլեկտրոնիկայի հիմունքներ • Էլեկտրատեխնիկական նյութեր • Էլեկտրական կայանների էլեկտրական մասեր • Էլեկտրական սարքավորանքներ • Էլեկտրատեխնիկական չափիչ սարքավորումներ և գործիքներ • Արտադրության կազմակերպում, էկոնոմիկա և կառավարում • Աշխատանքի պաշտպանություն և անվտանգության տեխնիկայի կանոններ
<p>Կարողությունները, հմտությունները և վերաբերմունքը</p>	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքային տեղամասում աշխատողների գործունեությունը կազմակերպելու, նրանց հնարավորությունները ճիշտ օգտագործելու կարողություն, • իրավիճակին համապատասխան մասնագիտական տեղեկություններ տրամադրելու, առկա տեղեկությունների հիման վրա եզրահանգումներ կատարելու կարողություն, • աշխատանքների կատարման առավել արդյունավետ տարբերակները ընտրելու, փոփոխվող աշխատանքային պայմաններում հիմնավոր որոշումներ կայացնելու և վերլուծություններ կատարելու կարողություններ, • Էլեկտրատեխնիկական չափիչ գործիքներ ու սարքեր օգտագործելու հմտություն, • Էլեկտրական շղթայի, էլեկտրական սարքավորումների պարամետրերը չափելու, գրանցելու և վերլուծելու կարողություն,

	<ul style="list-style-type: none"> • սարքավորումների անսարքությունների վերացման, փորձարկման և կարգավորման աշխատանքներ կատարելու հմտություններ, • սարքավորումները տեղակայելու կարողություն, • հողանցման համակարգի, մալուխային և օդային գծերի և էլեկտրասարքավորումների տեղակայման և քանակի հաշվարկ կատարելու կարողություն, • նորմատիվ փաստաթղթերից և ակտերից օգտվելու հմտություն, • հաշվետվություններ և այլ փաստաթղթեր կազմելու հմտություն, • պարտաճանաչություն, • կարգապահություն, • ուշադրություն և դիտողունակություն, • վերլուծական մտածողություն, • համագործակցելու պատրաստակամություն, • հանդուրժողականություն, • նորն ընդունելու պատրաստակամություն, • հետաքրքրություն նորագույն տեխնիկայի նկատմամբ:
--	---

**ՄԱՍՆԱԳԵՏԻ «ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ, ՑԱՆՑԵՐ, ՀԱՄԱԿԱՐԳԵՐ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՏԵԽՆԻԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Մասնագետի «Էլեկտրական կայաններ, ցանցեր, համակարգեր» մասնագիտության «Տեխնիկ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշիչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեսթային հարցման միջոցով: Թեսթը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող նյութերից:

2. մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է կատարել նշված գործողությունները՝

- կատարել էլեկտրակայանքի և էլեկտրասարքավորումների զննում
- բացահայտել և որոշել անսարքությունները կամ անճշտությունները
- իրականացնել առաջացած տեխնիկական խնդիրների վերացման աշխատանքներ պլանավորումը

- պատրաստել աշխատանքային գծագրեր և էլեկտրական սխեմաներ՝ պայմանական նշաններով
- կատարել անհրաժեշտ սարքերի և սնող գծերի նյութական ծախսերի և աշխատանքային ծավալների հաշվարկներ
- տեղակայել էլեկտրական սարքավորումները՝ համաձայն սահմանված նորմերի
- կատարել սնող ցանցի միացում և ստուգում՝ էլեկտրասարքավորման աշխատանքը ընդհանուր շղթայում
- հավաքել էլեկտրական սարքավորումները, կատարել ընթացիկ և վերջնական փորձարկումներ
- իրականացնել էլեկտրական սարքավորումների շահագործում, սպասարկում, վերանորոգում և հսկում
- բացահայտել և կարգավորել էլեկտրացանցի մալուխային և օդային գծերի, լուսարձակիչների, ենթակայանի էլեկտրասարքավորումների ու կառավարման ապարատների հետ առաջացած անսարքությունները, խափանումները և աշխատանքային այլ խնդիրները
- կատարել էլեկտրական սարքավորումներ շահագործող և սպասարկող անձնակազմի հրահանգավորում՝ ըստ “Տեխնիկական շահագործման անվտանգության կանոններ” տեխնիկական կանոնակարգի պահանջների
- լրացնել և (կամ) կազմել պահանջագրեր, հաշվետվություններ, ամփոփագրեր, աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրեր, հանձնման-ընդունման ակտեր, տեխնիկական վերահսկողության փաստաթղթեր՝ համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերի
- տիրապետել էլեկտրատեխնիկական չափիչ գործիքների ու սարքերի օգտագործման հմտություններին
- տիրապետել էլեկտրական շղթայի, էլեկտրական սարքավորումների պարամետրերը չափելու, գրանցելու և վերլուծելու կարողությանը

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունների առնվազն 90%-ը կատարվել է չափորոշիչներով նախատեսված չափանիշների համաձայն՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու հիգիենայի պահանջները:

